ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<08>> հուլիսի 2026թ. N ՄՈ/403-Ա

ք. Արմավիր

«ՄՈՒՍԱԼԵՌԻ ՖՐ. ՎԵՐՖԵԼԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱԻՐԱ ՍՎԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նաիրա Սվարյանի 2026 թվականի հուլիսի 7-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Մուսալեռի Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նաիրա Սվարյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 7 աշխատանքային օր և 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 18 աշխատանքային օր՝ 2026 թվականի հուլիսի 16-ից օգոստոսի 19-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նաիրա Սվարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Մուսալեռի Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մուսալեռի Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Սուսաննա Սարգսյանին:
3. «Մուսալեռի Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Սուսաննա Սարգսյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 16-ից օգոստոսի 19-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Նաիրա Սվարյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 20-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: GRIGORYAN ARAM 25.09.2008 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ • ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ • ՎԿԱՅԱԿԱՆ ՈՒԺԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ • 04447253 •